ԳԱՎԱՌԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

PUBLIC ENVIRONMENTAL
INFORMATION AARHUS CENTER
OF GAVAR

ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N __AA - 003__

« 14 » __Ապրիլի__ 2015թ

ՀՀ ԳՆ Ջրային տնտեսության պետական
կոմիտեի նախագահ պարոն Ա. Հարությունյանին

Տեղեկատվություն **ստանալու հարցում**

Հարգելի պարոն Հարությունյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն.

- 2015թ.-ի համար Սևանա լճից ի՞նչ ծավալի ջրառի առաջարկ է ներկայացվել, ի՞նչ ժամանակահատվածում է ջրառն իրականացվելու /նաև տրամադրել հիմնավորումները՝ ջրի քանակի պահանջարկի ձևավորման վերաբերյալ/:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող Լ. Ասոյան